



## Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ

375014, Երևան, Ազատության 26,  
 Հեռախոս՝ (374-1)-28-81-92; Ֆաքս՝ (374-1)-28-13-80  
 Էլ. փսա՝ [info@nfsat.am](mailto:info@nfsat.am); Ինտերնետային էջ՝ [www.nfsat.am](http://www.nfsat.am)

### ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային գիտական հանդիպումների և գիտաժողովների աջակցության ծրագիր-2005-2006

#### I. Ներածություն

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ) մրցութային հիմունքներով աջակցություն կցուցաբերի Հայաստանում հիմնարար կամ կիրառական գիտությունների բնագավառում միջազգային գիտական հանդիպումների կամ գիտաժողովների կազմակերպմանը: ԳԱՏԱՀ-ը աջակցություն կցուցաբերի 2-3 գիտաժողովի կամ գիտական հանդիպման կազմակերպմանը, որոնք տեղի կունենան ոչ առևտրային իրավական կարգավիճակ ունեցող հայկական գիտահետազոտական ինստիտուտներում: Կախված արտասահմանից ժամանող մասնակիցների քանակից, ինչպես նաև մրցութային ներկայացված հայտերի որակից և քանակից՝ ԳԱՏԱՀ-ը կֆինանսավորի մինչև երեք գիտաժողով՝ յուրաքանչյուրի համար տրամադրելով առավելագույնը մինչև 4000 ԱՄՆ դոլար կամ համարժեք դրամ:

Այս նախաձեռնության հիմնական նպատակն է նպաստել միջազգային գիտական հանրության հետ հայ գիտաշխատողների և ճարտարագետների ինտեգրման գործընթացին: Բացի այդ ԳԱՏԱՀ-ը ձգտում է վերականգնել նախկին Խորհրդային Միության փլուզումից առաջ Եվրա-սիական երկրների (նախկին Խորհրդային Միության) գիտաշխատողների և ճարտարագետ-ների միջև գոյություն ունեցած կապերը: ԳԱՏԱՀ-ը նաև հուսով է, որ այսպիսի կապերը կնպաստեն տարածաշրջանում առկա քաղաքական լարվածության մեղմացմանը:

Աջակցություն տրամադրելու համար առաջնահերթություն է տրվելու այն հայտերին, որոնք կապահովեն այլ եվրասիական երկրների (նախկին Խորհրդային Միության), Եվրոպայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների գիտական համայնքների ներկայացուցիչների մասնակցությունը: Ֆինանսավորման համար այլ առաջնահերթությունները թվարկված են Բաժին II.Բ. կետում՝ ստորև:

Սույն ծրագրի համար ֆինանսական աջակցությունը ԳԱՏԱՀ-ին տրամադրում է ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ)՝ ԱՄՆ պեղեպարտամենտի կողմից հատկացված միջոցներով:

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ-ը) անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1997թ-ին: ԳԱՏԱՀ-ի նպատակն է աջակցել Հայաստանում իրականացվող գիտական հետազոտությունների իրականացմանն ու գիտական համակարգի տեխնիկական հնարավորությունների զարգացմանը՝ մրցութային հիմունքներով հետազոտական և տեխնիկական միջոցների դրամաշնորհների տրամադրման և դասընթացների կազմակերպման միջոցով:

ԱՄՆ Քաղաքացիական մշակումների և հետազոտությունների հիմնադրամը (ՔՀՄՀ-ն) շահեր չհետապնդող կազմակերպություն է, որը ստեղծվել է 1995թ-ին՝ ԱՄՆ կառավարության կողմից՝ նպաստելու միջազգային գիտական և տեխնիկական համագործակցությանը: ՔՀՄՀ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելել <http://www.crdf.org> :

Առաջարկվող գիտաժողովը պետք է տեղի ունենա՝  
2005 թ.-ի օգոստոսի 15-ից մինչև 2006 թ.-ի մարտի 31-ը:

Սույն Ծրագրի շրջանակում մրցույթի մասնակցության համար հայտերը պետք է ԳԱՏԱՀ-ին ներկայացվեն մինչև 2005թ. մայիսի 3-ը, երեքշաբթի, ժամը 18:00: ԳԱՏԱՀ-ը նախատեսում է հայտարարել մրցույթի արդյունքները 2005 թ.-ի հունիսի 1-ին:

## **II. Ծրագրի ուղեցույց**

### **Ա. Մասնակցության իրավունքը**

Յուրաքանչյուր կազմակերպիչ (նախագծի ղեկավար) պետք է համապատասխանի մասնակցության համար որոշիչ հետևյալ չափանիշներին՝

- Ունենա գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան (կամ դրանց համարժեք կոչում),
- Հանդիսանա Հայաստանի քաղաքացի և մշտապես բնակվի Հայաստանում,
- Լրիվ դրույթով աշխատի ոչ առևտրային կազմակերպությունում կամ համալսարանում՝ քաղաքացիական հետազոտությունների ոլորտում:

### **Բ. Առաջնահերթությունները**

ԳԱՏԱՀ-ը առաջնահերթություն է տալիս այն հայտերին, որոնք կընդգրկեն՝

- Նախկինում ռազմական ոլորտում, հատկապես զանգվածային ոչնչացման զենքի արտադրման ասպարեզում աշխատած գիտաշխատողներին և ճարտարագետներին: Նախկինում ռազմական ոլորտում ընդգրկված բոլոր գիտաշխատողները և ճարտարագետները պետք է համառոտ նկարագրեն իրենց աշխատանքային փորձը այդ բնագավառում, ինչպես նաև Ա և Բ ձևերի համապատասխան բաժիններում նշեն Հավելված 1-ում ներկայացված համապատասխան ռազմական ոլորտների այն ծածկագրերը, որոնք ամենից լավ են բնութագրում նրանց աշխատանքային փորձը:
- Գիտաշխատողներին և ճարտարագետներին, որոնք գիտական աստիճան են ստացել վերջին վեց տարիների ընթացքում:
- ԱՄՆ-ն ներկայացնող գիտաժողովի մասնակիցներին:
- Հարավկովկասյան առնվազն մեկ երկիր ներկայացնող մասնակիցներին:
- Ոչ առևտրային կարգավիճակ ունեցող Երևանից դուրս գտնվող կազմակերպություն-ներին:
- Այն ինստիտուտներին, որոնք նախկինում չեն արժանացել ԳԱՏԱՀ-ի միջազգային գիտաժողովների աջակցության դրամաշնորհներին:
- Համաֆինանսավորման հնարավորություններ այլ աղբյուրներից՝ ներառյալ գիտաժողովը անցկացնող կազմակերպությունը, Հայաստանի կառավարությունը, առևտրային կազմակերպությունները և ֆինանսավորող այլ միջազգային գործակալությունները:

### **Գ. Հայտի ներկայացումը**

**Հայտը չպետք է գերազանցի 12 էջը՝ ներառյալ բոլոր ձևերը: 12 էջ գերազանցող յուրաքանչյուր հայտ համարվելու է անվավեր:**

Դիմորդները պետք է ԳԱՏԱՀ-ին հայտերը ներկայացնեն հետյալ կերպ՝

- Հայտի երկու օրինակ հայերեն և մեկ օրինակ անգլերեն լեզուներով՝ հայ կազմակերպչի բնօրինակ ստորագրությամբ, ինչպես նաև գիտաժողովը անցկացնող կազմակերպության տնօրենի բնօրինակ ստորագրությամբ և կնիքով:
- Հայտի մեկ էլեկտրոնային տարբերակ հայերենով և մեկ տարբերակ անգլերենով:
- Դիմորդները պետք է հայտի էլեկտրոնային տարբերակներն ուղարկեն Microsoft Word-ի կամ PDF ձևաչափով՝ gmanas@nfsat.am հասցեով, նամակի թեմայի տողում նշելով “ISMCS Activity”:
- Բոլոր դիմումները պետք է տպվեն հայերենով՝ 1.5 տողամեջ հեռավորությամբ, տառերի 12-րդ չափսով, 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից և ներքևից, բոլոր էջերը, ներառյալ ձևերը, պետք է համարակալվեն վերևի աջ անկյունում: Անգլերեն լեզվով տարբերակի համար պահանջները նույնն են:

### **Դ. Հայտի բովանդակությունը**

Յուրաքանչյուր հայտ պետք է պարունակի հետևյալ բոլոր բաղադրիչները՝ ստորև նշված կարգով: Ուսումնասիրվելու են միայն այն դիմումները, որոնք կպարունակեն այդ տեղեկու-թյունները:

- **Տիտղոսաթերթ (Ձև-Ա):** Տիտղոսաթերթը պետք է պարունակի նախագծի ղեկավարի բնօրինակ ստորագրությունը և գիտաժողովը անցկացնող կազմակերպության տնօրենի բնօրինակ ստորագրությունն ու կնիքը:
- **Համառոտ ամփոփում:** Մոտավորապես կես էջում ամփոփ ներկայացրեք գիտաժողովի նպատակները և բացատրեք դրա դերն ու նշանակությունը միջազգային գիտական հանրության հետ հայ գիտաշխատողների և ճարտարագետների ինտեգրման գործընթացի տեսակետից:
- **Գիտաժողովի նկարագրություն (առավելագույնը 5 էջ):** Նկարագրել՝
  - ա. Ինչպե՞ս կարող են գիտաժողովի ընթացքում պլանավորվող քննարկումներն ու միջոցա-ռումները նպաստել գիտաժողովի նպատակների իրականացմանը:
  - բ. Ինչպե՞ս կարող են կազմակերպիչների անհատական և միացյալ հնարավորությունները նպաստել գիտաժողովի իրականացմանը:
  - գ. Ինչպե՞ս են կազմակերպիչները համակարգելու գիտաժողովի աշխատանքները:
  - դ. Նախկինում գիտաժողովի հայ կազմակերպիչի և գիտաժողովը անցկացնող կազմակեր-պության կողմից կատարված նշանակալի աշխատանքները:
  - ե. Միջոցառման շահավետությունը մասնակցող բոլոր կողմերի համար:
- **Տվյալներ ենթադրվող մասնակիցների մասին (ձև B):** Տվյալներ ներկայացնել Եվրասիական և Եվրոպական երկրները, ինչպես նաև ԱՄՆ-ն ներկայացնող մինչև 10 առաջարկվող մաս-նակիցների մասին:
- **Բյուջե (ձև C):**
- **Բյուջեի մեկնաբանում (1 էջ):** Առանձին թերթի վրա պետք է բացատրվեն բյուջեի բոլոր կետերը: Թերթի վրա պետք է հստակ նշված լինի «Բյուջեի մեկնաբանություն» վերնագիրը:
- **Ստորագրված համաձայնություններ:** Համաձայնության նամակներ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն՝ Եվրասիական (նախկին Խորհրդային Միության) և Եվրոպական երկրները, ինչպես նաև ԱՄՆ-ն ներկայացնող կազմակերպությունների կամ գիտնականների մասնակ-ցության վերաբերյալ:
- **Ֆինանսավորման այլ աղբյուրներից երրորդ կողմի ներդրումների պարտավորության նամակ(ներ) ներդրումների մասին:** Պահանջվում է միայն այն հայտերի համար, որոնց ֆինանսական կամ այլ տեսակի նյութական աջակցություն է տրամադրվելու նաև այլ աղբյուրներից (բացի ԳԱՏԱՀ-ից): Լրացուցիչ ֆինանսավորման համար ընդունելի այլ աղբյուրներ կարող են հանդիսանալ (բայց դրանցով չեն սահմանափակվում) Հայաստանի կառավարությունը, հայկական առևտրային կազմակերպությունները և միջազգային կազմակերպությունները: Այլ աղբյուրներից լրացուցիչ ներդրումների պարտավորության նամակներում պետք է հստակ նշված լինի գիտաժողովը, որին ցուցաբերվելու է աջակցություն և պետք է ստորագրված և կնքված լինի կազմակերպության ղեկավարի կողմից:

### **Ե. Գնահատման չափանիշներ**

ԳԱՏԱՀ-ի գիտխորհուրդը և անկախ փորձագետները այս ծրագրի համար ներկայցված հայտերի գնահատման համար օգտագործելու են հետևյալ չափանիշները՝

- 1) **Կազմակերպչական ունակություններ:** Գիտաժողովի կազմակերպիչների և մասնակիցների գիտաժողովի կազմակերպման և համակարգման ունակությունները, ինչպես նաև գիտաժողովի գիտական արժեքն ու տեխնիկական ապահովվածությունը
- 2) **Ազդեցությունը:** Հավանականությունը, որ առաջարկվող գիտաժողովը կնպաստի հստակեցնել հետագա հետազոտությունների ուղղությունները կամ համատեղ հետազոտական առաջարկությունների ստեղծմանը՝ ԳԱՏԱՀ-ի կամ այլ ֆինանսավորող կազմակերպությունների մրցույթներին ներկայացնելու համար:
- 3) **Փոխշահավետությունը:** Այն հավանականությունը, որ առաջարկվող գիտաժողովի արդյունքում մասնակիցների միջև կստեղծվի կարևոր փոխշահավետ համագոր-ծակցություն: Հավանականությունը, որ այն համեմատաբար շահավետ է Հայաստանի և միջազգային գիտական հանրության համար գիտական և տեխնիկական տեսակետից :

- 4) **Իրականացումը:** Առաջարկվող գիտաժողովի նախագծի իրագործելիությունը, երաշխիքներն ու ծախսերի հիմնավորվածությունը:
- 5) **Աջակցության երաշխիքները:** Ինչ աստիճանով գիտաժողովը կազմակերպող կազմակերպության և տեղական պաշտոնյաները կօգնեն գիտաժողովի կազմակերպմանը՝ ներառյալ գիտաժողովի համար սարքերի և այլ պիտույքների, ինչպես նաև համաֆինանսավորման հնարավորություններ տրամադրելու միջոցով:

### **ԳԱՏԱՀ-ի բոլոր որոշումները վերջնական են և գանգատարկման ենթակա չեն:**

### **III. Ցուցումներ բյուջեն կազմելու վերաբերյալ**

#### **Ա. Թույլատրելի ծախսեր**

- Գիտաժողովի համար ԳԱՏԱՀ-ից հայցվող ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 4000 ԱՄՆ դոլար (կամ համարժեք դրամ) գումարը: 4000 ԱՄՆ դոլարից շատ հայցող հայտերը չեն ուսումնասիրվի:
- Սույն ծրագրի շրջանակներում թույլատրելի են համարվում հետևյալ ծախսերի տեսակները՝
  1. **Եվրասիական (նախկին Խորհրդային Միության) երկրները ներկայացնող մաս-նակիցների միջազգային ճանապարհածախսերը:** Մինչև 2000 ԱՄՆ դոլար (կամ դրա դրամային համարժեքը) կարող է տրամադրվել այս տեսակի ծախսերի համար:
  2. **Գիշերավարձը:** Եվրասիական (նախկին Խորհրդային Միության) երկրները ներկայացնող մասնակիցների գիշերավարձի համար կարող է հայցվել մինչև 2000 ԱՄՆ դոլար: Գիշերավարձի համար հայցվող առավելագույն գումարը չպետք է գերազանցի գիտա-ժողովի կազմակերպիչներին անհրաժեշտ ընդհանուր գումարի 50%-ը:
  3. **Մնունդը:** Եվրասիական (նախկին Խորհրդային Միության) երկրից ժամանած յուրաքանչյուր մասնակցի համար օրեկան կարող է հայցվել մինչև 10 ԱՄՆ դոլար: Մնունդի ծախսերի համար առավելագույն հայցվող գումարը չպետք է գերազանցի սնունդի ծախսերի համար գիտաժողովի կազմակերպիչներին անհրաժեշտ ընդհանուր գումարի 30%-ը:
  4. **Նյութեր և ծառայություններ:** Կարող է հայցվել մինչև 1400 ԱՄՆ դոլար՝ պատճենահանման, գիտաժողովի թեզերի գրքի տպագրության, գրենական պիտույքների, գիտաժողովի համար անհրաժեշտ պարագաների, ներառյալ ձայնային, ցուցադրման և թարգմանչական սարքերի վարձակալության ծախսերը:
  5. **Տեղական տրանսպորտ:** Անհրաժեշտության դեպքում, կարող է հայցվել մինչև 500 ԱՄՆ դոլար վերգետնյա ամենօրյա տրանսպորտի համար՝ մասնակիցներին բնական վայրից գիտաժողովի վայրը տեղափոխելու համար:
  6. **Հաղորդակցության ծառայություններ:** Կարող է հայցվել մինչև 300 ԱՄՆ դոլար՝ հաղորդակցության ծախսերի համար՝ ինտերնետը և ֆաքսը ներառյալ:
  7. **Այլ ծախսեր:** Կարող է ներառել թարգմանության ծախսերը:

### **IV. Այլ տեղեկություններ**

#### **Հայ կազմակերպչի պարտականությունները**

- Կապող օղակ հանդիսանալ ԳԱՏԱՀ-ի և առաջարկվող գիտաժողովի մասնակիցների միջև:
- Ընտրել մասնակիցներին և ապահովել նրանց ներկայությունը գիտաժողովին:
- Համակարգել գիտաժողովի կազմակերպման տեղական բոլոր աշխատանքները՝ գիտաժողովի վայրի, նյութական և տեխնիկական մատակարարման և այցելող մասնակիցների բնական վայրի հարցերը ներառյալ:
- Գիտաժողովի ավարտից անմիջապես հետո պատրաստել և ԳԱՏԱՀ-ին ներկայացնել ամփոփիչ հաշվետվություն:

#### **Բ. ԳԱՏԱՀ-ի պարտականությունները**

- Որոշումը կայացնելուց հետո ԳԱՏԱՀ-ը դիմորդներին գրավոր կհայտնի արդյունքների մասին:
- Աջակցության համար հայտի ընտրության դեպքում ԳԱՏԱՀ-ը դրա մասին կտեղեկացնի դիմորդներին՝ դրամաշնորհի ակտիվացումը և վճարումները սկսելու համար:

**Գ. Ժամանակացույց**

- Հայտերը կարող են ԳԱՏԱՀ-ին ներկայացվել մինչև **2005թ.-ի մայիսի 3-ը, ժամը 18:00:**
- Մրցույթի արդյունքների մասին ԳԱՏԱՀ-ը կհայտարարի մոտավորապես **2005 թ.-ի հունիսի 1-ին:**
- Նախատեսվող գիտաժողովը պետք է տեղի ունենա մոտավորապես **2005թ.-ի օգոստոսի 15-ի** և **2006թ.-ի մարտի 31-ի** միջև ընկած ժամանակահատվածում:

**Դ. Գաղտնիությունը**

Բոլոր հայտերը ԳԱՏԱՀ-ը դիտելու է որպես գաղտնի տեղեկություն և պահանջելու է, որ փորձագետները նույնպես պահպանեն հայտերի գաղտնիությունը: Բայց և այնպես, մրցույթը հաղթած հայտերի հեղինակներին տեղեկացվում է, որ հաղթած նախագծերը դիտարկվելու են որպես հասարակության սեփականություն: Հետևապես, ըստ հեղինակի հայեցողության, հատուկ տեղեկությունները, որոնք գործնական և գաղտնի են ու հրապարակման համար նախատեսված չեն, պետք է պիտակավորվեն իբրև այդպիսիք՝ հայտի համապատասխան պարբերությունների վերևը և ներքևը նշումներ կատարելով: Մրցույթը հաղթած հայտերի այսպիսի էջերը հրապարակման ենթակա չեն լինի: Իսկ այն հայտերը, որոնք շնորհի չեն արժանանա, ԳԱՏԱՀ-ի կողմից հրապարակման ենթակա չեն:

**Ե. Կանոններ և քաղաքականություն**

Դրամաշնորհների վերաբերյալ կիրառվող քաղաքականության և կանոնների հետ ծանոթանալու համար խնդրվում է այցելել հետևյալ ինտերնետային էջը՝

[http://www.crdf.org/AwardsAdministration/awards\\_admin\\_main.html](http://www.crdf.org/AwardsAdministration/awards_admin_main.html)

ԳԱՏԱՀ-ը և ՔՀՄՀ-ն ենթարկվում են էքսպորտի վերահսկմանը և նման ծրագրերում արտա-սահմանյան կազմակերպությունների մասնակցությանը վերաբերող ԱՄՆ-ի կառավարության կողմից սահմանված բոլոր կանոններին և օրենքներին: Ըստ ԳԱՏԱՀ-ի և ՔՀՄՀ-ի քաղաքա-կանության՝ ԱՄՆ-ի կառավարության կողմից սահմանափակված անձանց կամ կազմակերպությունների հետ ոչ մի տեսակի գործարք չի կարող նախաձեռնվել առանց դրա համար ԱՄՆ Կառավարության կողմից համապատասխան հատուկ լիազորման: ԳԱՏԱՀ-ը և ՔՀՄՀ-ն իրավունք են վերապահում սահմանափակել մեր ծրագրերում ցանկացած անձի կամ կազմակերպության մասնակցության իրավունքը:

**Զ. Կոնտակտային տեղեկություններ**

Հայտերի ներկայացման հարցերի կամ տվյալ ծրագրի հետ կապված մանրամասն տեղեկությունների համար դիմել ԳԱՏԱՀ: Դիմումները պետք է ներկայացվեն անմիջապես Գրիգորի Մանասարյանին՝ ԳԱՏԱՀ-ի Ծրագրի տնօրենին  
Միջազգային գիտական հանդիպումների և գիտաժողովների ծրագիր  
Երևան, 375014  
Ազատության 26,  
Հեռ: 28 81 92  
Էլ. փոստ: gmanas@nfsat.am

**Հայտերի ամբողջականության ցանկ**

<input type="checkbox"/> Տիտղոսաթերթ (Ձև-Ա)	<input type="checkbox"/> Համառոտ ամփոփում
<input type="checkbox"/> Գիտաժողովի նկարագրություն	<input type="checkbox"/> Տվյալներ մասնակիցների մասին (Ձև-Բ)
<input type="checkbox"/> Բյուջե (Ձև-Գ)	<input type="checkbox"/> Բյուջեի մեկնաբանություն
<input type="checkbox"/> Ստորագրված համաձայնություններ	<input type="checkbox"/> Երրորդ կողմի հնարավոր ներդրումների պարտավորության նամակներ (եթե կան)

**Հավելված 1****FORMER WEAPONS RESEARCHER CODE LIST**

Former Weapons Researcher – Former weapons researchers are defined as project participants that were engaged in weapons research at a current or former weapons laboratory or institution. Five categories of former weapons researchers are listed below (Categories B, C, and D are classified as Weapons of Mass Destruction researchers):

<b>CATEGORY A: MISSILE TECHNOLOGY EXPERTS</b>	
<b>CODE</b>	<b>DESCRIPTION</b>
<b>A1</b>	Design, construction and performance of air, space, surface and underwater - launched missiles. Materials and technologies for these missiles. Production of engines, fuels, composites, integrated elements, radio-electronic equipment, different testing devices for missiles.
<b>A2</b>	Techniques for guidance and control of missiles from launching to impact. Includes optical guidance, television guidance, wire guidance, present and terminal guidance, internal guidance, command guidance, and homing guidance.
<b>A3</b>	Missile handling and launching, including transportation, storage, and preparation for launching. Air, space, surface and underwater launching and support equipment and technologies; Checkout equipment and procedures. Guided missile ranges.
<b>A4</b>	Techniques and systems for tracking missiles as defensive measures. Can be from surface installations or air and space-borne platforms.
<b>CATEGORY B: CHEMICAL WEAPONS EXPERTS</b>	
<b>B1</b>	Design and performance of missile warheads and rockets for delivery of chemical weapons.
<b>B2</b>	Materials, facilities and performance processes needed for the production of chemical weapon agents and their key precursors.
<b>B3</b>	Dissemination of chemical weapon agents.
<b>B4</b>	Basic knowledge on CW design and their effect on human system.
<b>CATEGORY C: BIOLOGICAL WEAPONS EXPERTS</b>	
<b>C1</b>	Design and performance of missile warheads and rockets for delivery of biological weapons.
<b>C2</b>	Biopolymer production related to biological warhead capabilities.
<b>C3</b>	Dissemination of biological weapon agents.
<b>C4</b>	Basic knowledge on BW design and their effect on human system.
<b>CATEGORY D: NUCLEAR WEAPONS EXPERTS</b>	
<b>D1</b>	Basic knowledge of Nuclear Weapons design, construction, characteristics and the effect on human system,
<b>D2</b>	Design, construction and performance of missile warheads for delivery of nuclear weapons.
<b>D3</b>	Design, construction and performance of the equipment and Components for Uranium and Plutonium separation.
<b>D4</b>	Design, construction and performance of the equipment connected with Heavy Water Production.
<b>D5</b>	Design, construction and performance of the equipment for Development of Detonators.
<b>D6</b>	Design, construction and performance of Explosive Substances and Related Equipment.
<b>D7</b>	Design, construction and performance of the equipment and Components for Nuclear Testing.
<b>D8</b>	Design, construction, performance and operation of production-type nuclear reactors for fissile and tritium-content materials production (breeding).
<b>D9</b>	Design, construction, performance of nuclear reactors and units for submarine and for military space program.
<b>CATEGORY E: OTHER</b>	
<b>E1</b>	Design, construction, and performance of powerful laser facilities for military applications.
<b>E2</b>	Design, construction and performance of accelerator facilities for military applications in space programs
<b>E3</b>	Others

**Ձև Ա – ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

Միջազգային գիտական հանդիպումների և գիտաժողովների աջակցության ծրագիր – 2005-2006

<b>I. Տվյալներ միջոցառման մասին</b>							
ա. Անվանումը							
բ. Բնագավառը		գ. Ամսաթիվը.		սկիզբ՝ xx.yy.zzzz	վերջ՝ xx.yy.zzzz		
դ. Մասնակիցների ընդհանուր թվաքանակը.				ե. Հայաստանից մասնակիցների թվաքանակը.			
զ. Արտասահմանից մասնակիցները, այդ թվում							
ԱՄՆ-ից		Եվրասիայից ( նախ. ԽՍՀՄ երկր. )		Եվրոպայից		Այլ երկրներից	
է. Միջոցառման համառոտ նկարագրությունը.							

<b>II. Տվյալներ միջոցառման Պատասխանատու Կազմակերպության մասին</b>	
ա. Լրիվ անվանումը	
բ. Լրիվ հասցեն	

<b>III. Տվյալներ Պատասխանատու Կազմակերպության ղեկավարի մասին</b>				
ա. Ազգանունը		Անունը		Հայրանունը
բ. Գիտական աստիճանը		գ. Բնագավառը		
դ. Մասնագիտությունը				
զ. Կոնտակտային տվյալները, այդ թվում				
Աշխ. հեռախոսներ		Ֆաքս		Էլ.փոստ
է.				
_____		Կ.Տ.	_____	
ստորագրություն			ամսաթիվ	

<b>IV. Տվյալներ Պատասխանատու Կազմակերպիչի (միջոցառման գլխավոր պատասխանատուի) մասին</b>				
ա. Ազգանունը		Անունը		Հայրանունը
բ. Ծնված՝ օր, ամիս, տարեթիվ				
գ. Գիտական աստիճանը		դ. Բնագավառը		ե. Տարին
զ. Մասնագիտությունը				
է. Կոնտակտային տվյալները, այդ թվում				
Աշխ. հեռախոսներ		Ֆաքս		Էլ.փոստ
ը. Ունեք արդյոք ռազմական նշանակության հետազոտությունների փորձ		Այո		Ոչ
թ. Եթե «Այո», ապա նշեք ռազմական նշանակության հետազոտությունների ծածկագիրը օգտվելով Հավելված 1-ում բերված ցանկի				
ժ. Համառոտ նկարագրեք ռազմական նշանակության հետազոտությունների Ձեր փորձը.				
_____		_____		
ստորագրություն		ամսաթիվ		

Ստորագրելով սույն Հայտը՝ ես հաստատում եմ, որ ընդունում եմ մրցույթի հայտարարության բոլոր պահանջները և կենթարկվեմ Ծրագրի բոլոր պայմաններին:

**Ձև Բ – ՏՎՅԱԼՆԵՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Հայաստանից, Եվրասիայից՝ նախկին ԽՍՀՄ նորանկախ երկրներից, Եվրոպայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից մինչև 10 մասնակիցների համար: Խնդրում ենք, անհրաժեշտության դեպքում բազմացնել այս էջը)

ա. Ազգանունը		Անունը		Հայրանունը		
բ. Կազմակերպությունը						
բ. Ծնված՝ օր, ամիս, տարեթիվ (միայն հայ մասնակիցների համար)						
գ. Գիտական աստիճանը			դ. Բնագավառը			
զ. Մասնագիտությունը						
է. Կոնտակտային տվյալները, այդ թվում						
Աշխ. հեռախոսներ		Ֆաքս		Էլ. փոստ		
ը. Երկիրը՝	Հայաստան	Եվրասիա	ԱՄՆ	Եվրոպա	Այլ երկրներ	
ը. Ունի արդյոք տվյալ անձը ռազմական նշանակության հետազոտությունների փորձ					Այո	Ոչ
թ. Եթե «Այո», ապա նշեք ռազմական նշանակության հետազոտությունների ծածկագիրը օգտվելով Հավելված 1-ում բերված ցանկի						

ա. Ազգանունը		Անունը		Հայրանունը		
բ. Կազմակերպությունը						
բ. Ծնված՝ օր, ամիս, տարեթիվ (միայն հայ մասնակիցների համար)						
գ. Գիտական աստիճանը			դ. Բնագավառը			
զ. Մասնագիտությունը						
է. Կոնտակտային տվյալները, այդ թվում						
Աշխ. հեռախոսներ		Ֆաքս		Էլ. փոստ		
ը. Երկիրը՝	Հայաստան	Եվրասիա	ԱՄՆ	Եվրոպա	Այլ երկրներ	
ը. Ունի արդյոք տվյալ անձը ռազմական նշանակության հետազոտությունների փորձ					Այո	Ոչ
թ. Եթե «Այո», ապա նշեք ռազմական նշանակության հետազոտությունների ծածկագիրը օգտվելով Հավելված 1-ում բերված ցանկի						

ա. Ազգանունը		Անունը		Հայրանունը		
բ. Կազմակերպությունը						
բ. Ծնված՝ օր, ամիս, տարեթիվ (միայն հայ մասնակիցների համար)						
գ. Գիտական աստիճանը			դ. Բնագավառը			
զ. Մասնագիտությունը						
է. Կոնտակտային տվյալները, այդ թվում						
Աշխ. հեռախոսներ		Ֆաքս		Էլ. փոստ		
ը. Երկիրը՝	Հայաստան	Եվրասիա	ԱՄՆ	Եվրոպա	Այլ երկրներ	
ը. Ունի արդյոք տվյալ անձը ռազմական նշանակության հետազոտությունների փորձ					Այո	Ոչ
թ. Եթե «Այո», ապա նշեք ռազմական նշանակության հետազոտությունների ծածկագիրը օգտվելով Հավելված 1-ում բերված ցանկի						

## Ձև Գ – ԲՅՈՒՋԵ ( ծախսերը ներկայացնել հայկական դրամով)

Ծախսերի տեսակը	ԳԱՏԱՀ-ից հայցվող գումարը	Պատասխանատու Կազմակերպության կողմից ներդրվող գումարը	Այլ աղբյուրներից ներդրվող գումարը	Ընդամենը
Արտասահմանից ժամանող մասնակիցների աջակցության ծախսեր				
1. Միջազգային տրանսպորտային ծախսեր				
2. Գիշերավարձ				
3. Մուտնդ				
4. Տեղական տրանսպորտ				
5. Այլ (նշել)				
Ընդամենը				
Կազմակերպչական ծախսեր				
1. Նյութեր և ծառայություններ				
2. Հաղորդակցման ծախսեր				
3. Այլ (նշել)				
Ընդամենը				
Կազմակերպիչների փոխհատուցում (անուն, ազգանուն)				
1.				
2.				
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				
1. Հայկական դրամով				
2. ԱՄՆ դոլարով				